## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

26.01.2016թ. կնքված «ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-3» պայմանագրի

ք. Երևան «21» «ապրիլ» 2016թ.

«Էրեբունի-Պլազա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հասցե՝ ՀՀ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, գրանցման համարը՝ 286.110.05857, գրանցման ամսաթիվը՝ 25.10.2005թ., վկայական՝ 03 Ա 070030), այսուհետ՝ «Վարձատու», որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Հովհաննես Ստյոպայի Մաթևոսյանը (անձնագիր՝ AM 0611269, տրված՝ 24.01.2012թ, 012-ի կողմից, հասցե՝ ՀՀ ք. Երևան, Աբելյան 3 շենք, բն. 35), ով գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից և

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, (հասցե՝ ՀՀ, ք . Երևան, Տիգրան Մեծի 4), այսուհետ՝ «Ենթավարձակալ», ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վահագն Հարությունյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա և որի անունից համաձայն 22.04.2016թ. տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Դիանա Լենորի Գրիգորյանը (անձնագիր՝ AK0573998, տրված՝ 26.07.2010թ., 004-ի կողմից, բնակ.՝ ք.Երևան, Փափազյան 13 շենք. բն.57), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

Սույն համաձայնագիրը կնքվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 333-Ա որոշումը:

### 1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով 26.01.2016թ. կնքված «ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-3» պայմանագրի 17.3 կետը կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 15.2 կետում նշված «31.03.2016թ.» բառերը փոխարինել «20.02.2016թ.» բառերով:

1.2 Պայմանագրի 2.1 կետում նշված «19824500» բառերը փոխարինել «11165521.3» բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Ենթավարձակալության իրավունքի դադարեցման պետական գրանցման օրենքով սահմանված պետական պարտադիր վճարները կատարվում են Վարձատուի հաշվին:

2.4 Սույն համաձայնագիրն օրինական է միայն այն դեպքում, եթե այն ստորագրված է Կողմերի կողմից:

2.5 Կողմերը հաստատում են, որ վարձակալած 603.6 (վեց հարյուր երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքը Ենթավարձակալի կողմից 20.02.2016թ. հանձնվել է Վարձատուին՝ համաձայն Հանձնման-ընդունման ակտի:

2.6 Ղեկավարվելով ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետով՝ Կողմերը սահմանում են, որ սույն Համաձայնագրով ամրագրված նորմերը մինչանց միջև 20.02.2016 թվականին կնքված տարածքի հետ վերադարձման մասին հանձնման-ընդունման ակտի հիման վրա ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառվում են՝ սկսած 2016 թվականի փետրվարի 20-ից:

2.7 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Վարձատու**

«Էրեբունի-Պլազա» ՍՊԸ
ք. Երևան,Վազգեն Սարգսյան26/1
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ
Հ/Հ 23800-04941750100
ՀՎՀՀ 02580003

**Լիազորված անձ**

**Հովհաննես Մաթևոսյան**

**Ենթավարձակալ**

ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

**Աշխատակազմի ղեկավար՝**

**Վահագն Հարությունյան**